կած կարող է ազդեցութիւն ունենալ նորա որակութեան վերայ. չկայ ջրանցք, առանց որի հողը կանոնաւոր կերպով չի մշակուի. վերջապէս անհնար է գաղութի դուռը բաց անել ամէն բաղխողի առաջ, որովհետև նա կարող է իր մէջ առ այժմս միայն 50 հոգի պատսպարել։ Շնորհիւ այդ բանի տասնեակ երեխաներ ընթանում են այն ճանապարհով, որ անդառնալի է. նոքա գնում են բանտ։ Հետևապէս և կարևոր է շինութիւնը ընդարձակել։ Ընկերութիւնը իր հիմնուած օրից սկսած մինչև այժմս մօտ 60000 ռ. ծախսել է. եթէ ոչ աւելի, գոնէ նոյնքան էլ հարկաւոր է այժմս, որպէս զի ուղղիչ գաղութը իր համապատասխան վիճակում լինի։ Մինչդեռ մի քանի ժամանակ առաջ ընկերութեան գանձարանը այնպիսի ցաւալի վիճակի մէջ էր, որ շատերի գլխում ծնուեց մի վրդովեցուցիչ միտք՝ փակել այս հիմնարկութիւնը, նախ քան նորա ծաղկելը։ Միայն, երբ բարերարութիւն արուեց բոլոր վերը նշանակեալ կարիքներին, այն ժամանակ կարելի կլինի համարձակութեամբ ասել, որ Կովկասում «անարգուած» երեխաների ուղղելու գործը իր պատշաճաւոր դիրքի մէջն է։

Կովկասի ընկերութիւնը հիմք դրեց այդ «աստուածահաճոյ» գործին։ Անկարող է անգամ մտածել, որ նա կթողնի այդ գործը կիսատ, կամ որ աւելի վատն է, իր անտարբերութեամբ կսպանէ նորան իր սաղմի մէջ։ Անհաւատալի է թւում, որ ընկերութիւնը չուզենայ ջնջել այն անարգանքը, որ նա պատճառում է իր անմեղ և ձեռնհաս անդամներին։ Այն համակրութիւնը, այն պատրաստակամութիւնը, որ ցոյց տուին մինչև այժմ հասարակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչները, իրաւունք են տալիս կարծելու, որ հասարակութիւնը դժուար րոպէներին օգնութեան կհասնի այն գործին, որը իր ջանքերի պտուղն է։ Դժուար րոպէն հասել է. Կովկասում դեռահասներ ուղղելու գործը նշանաւոր չափով նիւթական զոհաբերութիւն է պահանջում. «Փոքունքս այսօրեկ» օգնութեան են կանչում։ Միթէ նոցա կոչը պէտք է մնայ «ձայն բարբառոյ յանապատի»։

Թարգմանութիւն Գ..

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ա. Խաչիկեան. Երգեր ու Վէրքեր. Ալեքսանդրապոլ. 1898. 10 կոպ։

Գ. Մոճոռեանց. Տիգրոնի կոլանաւորը. Ալեքսանդրապոլ. 1899. 15 կոպ։

Տեղեկագիր Բ. տարեշրջանի Ազգային կրթարան—Որբանոցի ի Կեսարիա. Գահիրէ. 1899։

Բ. Խալաթեանց. Տան և ընտերոյ Դարի կտակը. Թիֆլիս. 1890. 15 կոպ։

Ֆրանսուա Կոպպէ. Թաղի համար. Ողբերգութիւն 5 գործ. թարգմ. ֆրանսերէնից Միքայէլ Մանուչարեանց. Բագու. 50 կոպ։

Վանայ Սաղ, Երկրորդ մաս. Ժողովեց Գէորգ Գ. Շէրէնց. Թիֆլիսի Հայոց հրատարակչական Ընկ. № 150. Թիֆլիս. 75 կոպ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳ. ՀԱՆԴԻՍԻՑ.

### ԲԱԶՄԱՎԷՊ

*(Սեպտեմբեր ամիս)*

Հայ Ուսանողք.—Ատոմեանց նահատակութեան ժամանակն և այլ հանգամանք.—Բնաշխարհիկ բառարան.—Մխիթար (բանաստ.).—Հանք և իրենց ստուգաբանութիւնն.—Կոստանդնուպոլսէն դէպի Անկիւրիա.—Մարգարա Մծուրնացի կամ կեղծ—Ագաթանգեղոս.—Ընդծովեայ նաւագնացութիւն.—Գաղղ. արդի բանաստեղծութիւն.—Մաղնիսական քուն.—Գրախօսական տեսութիւններ.—Վերջին ողջոյնք առ աղաւն Վենետիկ.—Պատասխանիք բանասիրի մը դիտողութեանց.—Հանդէս Հանդիսից. Քաղաքական ամիս.—Ազգային արձագանգ։

### ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

*(Սեպտեմբեր ամիս)*

Ժողովածոյք առակաց Վարդանայ... ըստ Հայագէտ Ն. Մառի.—Եղիսաբեթուպոլսոյ հասարակութեան այն արտօնութիւնն թէ օտարք չկարենան իւր մէջը բնակիլ, կը կորսնցնէ իւր ոյժը.—Պարսկաստանի հայերը. Նրանց անցեալը ներկան և ապագան.—Խիկար և իւր իմաստութիւնն.—Տեղեկագիր Յովսէփ Իզմիրեանց գրական Յանձնաժողովոյ.—Տեղեկագիր քննական ուղեւորութեան մ՚ ի Հայս Վ. Բելքի և Կ. Ֆ. Լեմանի.—Նոր հրատարակութիւնք.—Ազգային թերթերէ Տաղէփունջ. Քաղաքական տեսութիւն։